



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ՀՀ/26.2/13870-2023

12.05.23թ

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի
գործադիր տնօրեն Ս. Այվազյանին

Հասցեն՝ Հայաստան, Երևան, 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Էլ. հասցե՝ info@transparency.am

Ի պատասխան Ձեր 26.04.2023 թվականի
թիվ ԹԻ 23/50 գրության

Հարգելի՛ տիկին Այվազյան

Տեղեկացնում ենք, որ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Բազմաշահառու խմբի (ԲՇԽ) քաղաքացիական հասարակության խմբակցության առաջարկությունները Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության (այսուհետ՝ նաև Ռազմավարություն) 4-րդ նախագծային տարբերակի վերաբերյալ ներառված և հրապարակված են ՀՀ կառավարության օրակարգում ընդգրկված՝ «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթի 2-րդ ամփոփաթեթում (8-րդ կետ) <https://www.e-gov.am/sessions/> :

Միաժամանակ հայտնում ենք, որ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 2023 թվականի մայիսի 11-ին, ունեցել է 4 նախագծային տարբերակ, որոնք բոլորը ներկայացվել են Շրջակա միջավայրի նախարարություն՝ կարծիքի: Ռազմավարության վերջնական լրամշակված տարբերակի վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարությունը որևէ առարկություն չի ներկայացրել:

Տեղեկացնում ենք, որ Ռազմավարությունը մշակվել է տեխնիկական առաջադրանքին համապատասխան, միաժամանակ դրամաշնորհային ծրագրի

անբաժանելի մաս է հանդիսացել Համաշխարհային Բանկի պահանջներին համապատասխան մշակված, քաղաքականության բաղկացուցիչ մաս հանդիսացող՝ Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (այսուհետ՝ ՇԿՆՊ):

ՇԿՆՊ-ի նպատակն էր ամրագրել Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության առանցքային շահագրգիռ կողմերին, շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդները, հաստատել կառուցողական երկխոսություն կողմերի միջև ապահովելով շահագրգիռ կողմերի լայն և ակտիվ մասնակցությունը և ժամանակին ստեղծել կառուցողական երկխոսության մթնոլորտ հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի և գործողությունների պլանի մշակման նպատակով: Ինչպես արդեն նշվեց՝ մշակված Ռազմավարության նախագծերի չորս տարբերակներն էլ ներկայացվել են շահագրգիռ կողմերի քննարկմանը, ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծերը լրամշակվել են այնպես, որ իրար հակասող դիտարկումները փաստաթղթում ներկայացվեն փոխզիջումային տրամաբանությամբ՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի դիրքորոշումները:

Ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերը հանդիսացել են՝

- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, մասնավորապես՝ ընդերքի վարչությունը,
- Պետական մարմիններ (ՇՄՆ, ԱՆ, ԷՆ, ԱՍՀՆ, Տեսչական մարմինների համակարգման գրասենյակը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Կադաստրի կոմիտեն, Առողջապահության և աշխատանքի տեսչությունը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը և այլն),
- ԱՃԹՆ բազմաշահառու խումբը,
- Հանքարդյունահանող ընկերությունները և ոլորտի կազմակերպությունները՝ (Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն) ընդերքօգտագործող կազմակերպությունները,
- Հանքարդյունաբերության ոլորտի աշխատողներ և արհմիություններ,
- Գիտական հանրությունը,
- **Քաղաքացիական հասարակությունը,**
- Միջազգային կազմակերպություններ:

Ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի ներգրավումը իրականացվել է հետևյալ երկու հիմնական ուղղություններով՝

1. Խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ և անդրադարձերի հավաքագրում ծրագրի ողջ ընթացքում.

2. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի և առնչվող իրավական փաստաթղթերում պլանավորված փոփոխությունների մասին իրազեկման բարձրացման գործողություններ:

Ընդհանուր առմամբ, կիրառվել են շահագրգիռ կողմերի ներգրավման հետևյալ գործողությունները՝

- Հետազոտությունների և խորհրդակցությունների փուլ
- Ֆոկուս խմբերի քննարկումներ (ՖԽՔ) և/կամ ընդհանուր ժողովներ
- Կլոր-սեղան քննարկումներ և ֆորումներ
- Փորձագիտական և հիմնական տեղեկատվական հարցազրույցներ
- Առցանց հետադարձ կապի հարթակ
- Բողոքների արձագանքման մեխանիզմ
- Մարզային այցեր

Հարկ է նշել, որ Ռազմավարության նախագծային տարբերակների մշակման յուրաքանչյուր փուլում տեղի են ունեցել շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ, հանդիպումներ և քննարկումներ: Ռազմավարության մշակման նախնական փուլերում ճշգրտվել է շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների շրջանակը, այնուհետև կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ վերջիններիս հետ: Մասնավորապես՝ Ռազմավարությանը, վերջինիս ուղղություններին և նպատակներին ծանոթացնելու, խնդրահարույց հարցերը քննարկելու նպատակով կազմակերպվել են այցեր ՀՀ Լոռու (04.03.2022թ.) և ՀՀ Սյունիքի մարզեր (14.03.2022թ.): Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակներում մարտի 11-ին քաղաքացիական հասարակության կողմից պարբերաբար վերհանվող մի քանի սկզբունքային խնդիրների քննարկման նպատակով ՏԿԵ նախարարությունում կազմակերպվել է ֆոկուս խմբի քննարկում՝ ԱՃԹՆ ԲՇԽ քաղհասարակության խմբի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, այլ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների միջև, իսկ նույն թվականի ապրիլի 4-ին կազմակերպվել է նաև քննարկում ընդերքօգտագործողների հետ:

2022 թվականի մայիսի 20-ին Ռազմավարության 4-րդ նախագծային տարբերակի քննարկման նպատակով հանդիպումը կազմակերպվել է շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ: Քննարկմանը ներկա են եղել.

- ՀՀ ՏԿԵ նախարարությունը՝ փոխնախարարի գլխավորությամբ,
- ՀՀ կառավարության, տարբեր նախարարությունների ներկայացուցիչներ,
- ԱՃԹՆ քարտուղարությունը,
- **Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները,**
- Հանքարդյունահանող ընկերություններ,
- Ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները:

Հարկ է նշել, որ Ռազմավարության նախագծի մշակման շրջանակներում կազմակերպվել է 22 միջոցառում (կից ներկայացվում է Ռազմավարության նախագծի մշակման շրջանակներում կազմակերպված միջոցառումների ցանկը), որին մասնակցել է ավելի քան 350 մարդ: 73 շահագրգիռ կողմ/կազմակերպություն է ներգրավված եղել աշխատանքներին: Շահագրգիռ կողմերի հետ բանավոր և գրավոր մեկնաբանությունների

արդյունքում կատարվել են զգալի փոփոխություններ: Բոլոր շահագրգիռ կողմերի մեկնաբանություններին տրվել են պատշաճ և ամբողջական պատասխաններ, իսկ խնդրահարույց հարցերը շարունակաբար քննարկվել են շահագրգիռ կողմերի հանդիպումների ընթացքում:

Նախագիծը տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-darft.am, սակայն վերջինիս վերաբերյալ դիտարկումներ չեն ստացվել:

Հավատարիմ մնալով թափանցիկ ու բաց աշխատելաճճի սկզբունքներին՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պատրաստակամ է կազմակերպել ևս մեկ հանդիպում Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

X 

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HOVHANNES 2012870325



Հարգանքով՝

Հ. Հարությունյան

Կատարող՝ Ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ,
Ս. Հակոբյան
Հեռ. 010 511337

Ց Ա Ն Կ

Ռազմավարության նախագծի մշակման շրջանակներում կազմակերպված միջոցառումների

Միջոցառում	Ամսաթիվ	Մասնակիցների քանակ՝ առանց խորհրդատուի
Կլոր սեղան՝ ընդերքօգտագործում և տնտեսական հարցեր	08.12.2021	30
Կլոր սեղան՝ բնապահպանություն և սոցիալական հարցեր	08.12.2021	30
Անհատական քննարկումներ	16.12.2021-16.02.2022	8
Ֆոկոս խմբի քննարկում՝ ընդերքօգտագործում	23.12.2021	16
Ֆոկոս խմբի քննարկում՝ պոչամբարի կառավարում	23.12.2021	12
Ֆոկոս խմբի քննարկում՝ կենսաբազմազանություն	27.12.2021	14
Ֆոկոս խմբի քննարկում՝ հանքի փակում	27.12.2021	12
Դահլիճային քննարկում	27.01.2022	25
Կլոր սեղան՝ Լոռի համայնքի բնակիչների, քաղհասարակության հետ	04.03.2022	15
Կլոր սեղան՝ Սյունիք համայնքի բնակիչների, քաղհասարակության, հանքարդյունահանող ընկերությունների հետ	14.03.2022	33
Անհատական քննարկումներ («Տեր-Տաճատյան» իրավաբանական և բիզնես-խորհրդատվական ընկերություն, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ, այլ)	22.02.2022-05.04.2022	10
Ֆոկոս խմբի քննարկում՝ քաղաքացիական հասարակության և կառավարության հետ	11.03.2022	16
Խորհրդատվական խմբի հանդիպումը ՏԿԵ նախարարի հետ	22.03.2022	6
Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության քննարկման միջգերատեսչական հանդիպում	24.03.2022	18
Ֆոկոս խմբի քննարկում՝ ընդերքօգտագործողների հետ	04.04.2022	10
Խորհրդատվական խմբի քննարկում ՏԿԵՆ հետ	04.05.2022	10
Հանդիպում շրջակա միջավայրի նախարարության հետ	04.05.2022	8
Ֆոկոս խմբի քննարկում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ներկայացուցիչների հետ	11.05.2022	6
Խորհրդատվական խմբի քննարկում ՀԲ գրասենյակի ներկայացուցչի հետ	16.05.2022	4
Կլոր-սեղան քննարկում շահագրգիռ կողմերի լայն խմբի հետ	20.05.2022	35
Անհատական քննարկումներ	01.05-31.05.2022	
Կլոր-սեղան քննարկում շահագրգիռ կողմերի լայն խմբի հետ	29.06.2022	